ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐԹՅԱՆ ՄԵՋ ԹԱԳԱՎՈՐԵԼ
SPECIAL TOPIC: REIGNING IN THE KINGDOM OF GOD

Քրիստոսի հետ թագավորելու հասկացությունը ավելի ընդարձակ աստվածաբանական կատեգորիայի մի մաս է, որը կոչվում է «Աստծո Թագավորություն»: Սա ծագել է Աստծո մասին որպես Իսրայելի ճշմարիտ թագավորի ՀԿ-յան հասկացությունից (տես՝ 1 Թագ. 8:7): Նա սիմվոլիկ կերպով թագավորեց (1 Թագ. 8:7, 10:17-19) Հուդայի ցեղից (տես՝ Ծնն. 49:10) և Հեսսեի ընտանիքից (տես՝ 2 Թագավորաց 7) մի ժառանգորդի միջոցով:

Հիսուսը խոստացված Մեսիայի վերաբերյալ ՀԿ-յան մարգարեության իրականացումն է: Նա բացեց Աստծո Թագավորությունը Բեթլեհեմում իր մարմնավորմամբ: Աստծո Թագավորությունը դարձավ Հիսուսի քարոզչության կենտրոնական այունը: Թագավորությունն ամբողջությամբ եկավ Նրա մեջ (տես՝ Մատթ. 10:7, 11:13, 12:28, Մարկ. 1:15, Ղուկ. 10:9,11, 11:20, 16:16, 17:20-21):

Այնուհանդերձ Թագավորությունը նաև ապառնի ժամանակում է (էսկատոլոգիական): Այն ներկա է, սակայն չի ավարտվել (տես՝ Մատթ. 6:10, 8:11, 16:28, 22:1-14, 26:29, Ղուկ. 9:27, 11:2, 13:29, 14:10-24, 22:16,18): Հիսուսն առաջին անգամ եկավ որպես չարչարվող ծառա (տես՝ Ես. 52:13-53:12), որպես խոնարհ (տես՝ Զաք. 9:9), սակայն Նա վերադառնալու է որպես Թագավորների Թագավոր (տես՝ Մատթ. 2:2, 21:5, 27:11-14): «Թագավորելու» հասկացությունը անշուշտ այս «թագավորության» աստվածաբանության մի մասն է: Աստված թագավորությունը տվել է Հիսուսի հետևորդներին (տես՝ Ղուկ. 12:32):

Քրիստոսի հետ թագավորելու հասկացությունը ունի մի քանի առանձնահատկություններ և հարցեր՝

1. Արդյո՞ք այն հատվածները, որտեղ հայտարարվում է, որ Աստված հավատացյալներին է տվել «թագավորությունը» Քրիստոսի միջոցով, վերաբերում է «թագավորելուն» (տես՝ Մատթ. 5:3,10, Ղուկ. 12:32):
2. Արդյո՞ք Հիսուսի խոսքերը ուղղված առաջին դարի Իր առաջին աշակերտներին՝ հրեական համատեքստում, վերաբերում է բոլոր հավատացյալներին (տես՝ Մատթ. 19:28, Ղուկ. 22:28-30):
3. Արդյո՞ք այժմ՝ այս կյանքում թագավորելու վրա Պողոսի կատարած շեշտադրումը հակասում է կամ լրացնում վերը նշված տեքստերին (տես՝ Հռոմ. 5:17, 1 Կորնթ. 4:8):
4. Ինչպե՞ս են չարչարվողները և թագավորողները կապված իրար (տես՝ Հռոմ. 8:17, 2 Տիմ. 2:11-12, 1 Պետ. 4:13, Հայտն. 1:9):
5. Հայտնության մեջ անընդմեջ կրկնվող թեման է փառավորված Քրիստոսի թագավորությունը բաժնեկցելը, սակայն արդյո՞ք այդ թագավորությունը՝
   ա. երկրավոր է, Հայտն. 5:10
   բ. հազարամյա, Հայտն. 20:4-6
   գ. հավիտենական, Հայտն. 2:26, 3:21, 22:5 և Դան. 7:14,18,27